

# Կոտայքի մարզպետը մասնակցել է ՏԿԵՆ նախարարի անցկացրած խորհրդակցությանը

Կոտայքի մարզպետ Ահարոն Մահակյանը մասնակցել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի գլխավորությամբ տեղի ունեցած հերթական աշխատանքային խորհրդակցությանը:

Օրակարգում են՝

Համահայկական ամառային 8-րդ խաղերի կազմակերպչական հարցերը, և դրանք Երևանից բացի նաև մարզերում կազմակերպելու անհրաժեշտությունը

ՀՀ մարզպետների աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկերի և պաշտոնների անձնագրերի նախագծերին, ՀՀ մարզերի համայնքապետարանների աշխատակազմերի հաստիքացուցակներին առնչվող, ինչպես նաև համայնքապետարանների աշխատակիցների և համայնքապետարանների ենթակա կազմակերպությունների աշխատակիցների ամենամյա չօգտագործված արձակուրդների վերաբերյալ հարցեր

Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների կատարողականների և վճարման փաթեթների ներկայացման վերաբերյալ հարցերը: